էին վրաց ազգային–դեմոկրատները, որոնք իրենց համագումարում, յունի–սին, բանաձևել էին հետևեալ պահանջները. «1. Վրաստանում պէտք է հաստատուի քաղաքական–հողային ինքնավարութիւն՝ ռամկավար–հանրապետական կազմի սկզբունքներով: 2. Ինքնավար Վրաստանի սահմանադրութիւնը մշակում է Թիֆլիսում գումարուած Ազգային Սէյմը: 3. Վրաց Սահմանադիր ժողովի ընտրութեան մասնակցում են Վրաստանի բոլոր չափահաս քաղաքացիները, առանց սեռի, դաւանանքի և ազգի խտրութեան, ընդհանուր, հաւասար, ուղղակի, դաղտնի և համեմատական քուէարկութեան սկզբունքով: 4. Վրաց ինքնավար օրէնսդրութեան և կառավարութեան են ենթարկւում, Վրաստանի հողի սահմաններում, բոլոր հարցերը, բացառութեամբ հետեւեալների. ա) պատերազմ և խաղաղութիւն. բ) արտաքին քաղաքականութիւն և պետական բիւդջէ:

Սա այն սաղմն է, որից աճեց ու զարգացաւ Վրաստանի անկախութիւնը և որին, սկզբում դաղտնի, ամաչելով, իսկ յետոյ բացայայտ կերպով միացան և վրաց սոցիալ–դեմոկրատները: Առհասարակ, պէտք է նկատել, որ յեղափոխութեան սկզբի ամիսներին, վրացի սոցիալ–դեմոկրատները վրաց ազգային խնդիրներում, յօժարութեամբ առաջ էին քշում ազգայնականներին, իսկ իրենք՝ պահելով միջազգային ու համառուսական դէմքն ու լեզուն՝ բաւականանում էին ձեռքի տակի օգնութեամբ: Ազգային–դեմոկրատների ջանքերով և վրացի սոցիալ–դեմոկրատների աջակցութեամբ, շատ շուտով, յատարարուեց վրաց եկեղեցու անջատումը համառուսական ուղղափառ եկեղեցուց և վրաց կաթուղիկոսութեան վերականգնումը:*)

Համապետական ոճ էին գործածում և մահմետականները, թէև, վրաց ազգայնականների նման, նոյնպէս դնում էին ազգային կամ, աւելի ճիշտ, համիսլամական պահանջներ: Ռուսաստանի յեղափոխութիւնը նրանց համար երկնքից ընկած պարգև էր, որ դալիս էր ազատագրելու մահմետական ազգին: Այս տրամադրութեան ցայտուն արտայայտիչը հանդիսացաւ կովկասեան մահմետականութեան ներկայացուցիչների առաջին համագումարը, որ բացուեց Բագուում, ապր. 15–ին: Այդ համագումարում հանդիսաւորապէս յայտարարուեց մահմետական շիա և սիւննի աղանդների միութիւն, որ աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց ժողովականների մէջ: Ձեռք–ձեռքի՝ բեմ բարձրացան Մուֆթին ու Շէյխ–Ուլ–Իսլամը և ամենքի աչքի առջև հանդիսաւորապէս համբուրեցին: Արտասանուեցին կրակոտ ճառեր մահմե–

---

*) Բիչ յետոյ, վրաց սոց.–դեմոկրատները դէն շպրտեցին այս թզենու տերևն էլ: Նոյեմբեր ամսին, Թիֆլիսում գումարուեց վրաց ազգային համագումարը բոլոր դասակարգերի և կուսակցութիւնների կատարեալ համերաշխութեամբ: Ն. Ժորդանիան զեկուցում տուեց քաղաքական կացութեան և վրաց ազգի քաղաքականութեան մասին: Եւ համագումարը, միաձայնութեամբ ու խանդավառ ծափերով, ընդունեց նրա առաջադրած կէտերը.—1) Վրաստանը, սեփական հողի վրա, պէտք է լինի ինքնավար և ունենայ ազգային օրէնսդրական մարմին. 2) Պէտք է որոշուեն Վրաստանի սահմանները՝ հարեւան երկրների հետ. 3) Վրաստանում ապրող ազգային փոքրամասնութիւններին պէտք է տրուեն մշակութային զարգացման երաշխիքներ. 4) Համառուսական Սահմ. Ժողովի չգումարուելու պարագային հրաւիրել համակովկասեան և առանձին ազգային սահմանադիր ժողովներ: Եւ այլն:

Ի՞նչ տարբերութիւն ազգային–դեմոկրատների ու այս ծրագրի միջև: